

Ս Պ Ո Ւ Չ Ը

Ժ օ ր ժ Է ս պ ա ր ք Ի .

—Ներս բերէք այդ երիտասարդին,—հրամայեց
պրուսաց կայսրը:

—Ահաւասիկ, ձերդ մեծութիւն:

Ապուշը ներս մտաւ: Խորին լուսթիւն էր տիրում,
երբ կայսեր աչքերը հարցական կերպով զննում էին
ձերբակալուած մարդու կերպարանքը: Նորա ետեւը, լարի
պէս ձգուած, կանգնած էին երկու սպաներ լուռ սպա-
սողական դրութեամբ: Միմիայն պատի ժամացուցի հա-
մաչափ ճօճալու ձայնն էր լսուում:

Կայսեր հայեացքը դեռ էլի բռնուածի վերայ էր
դադարած: Նա աչք ածեց նորա՝ գզգզուած մազերով,
անմիտ, վախկոտ աչքերով կուլիտ գլխին: Սորա ներ-
քեւի, կախ ընկած շրթունքից անընդհատ լորձունք էր
հոսում. գրեթէ անհաւանական էր թւում, որ այս դա-
ղանացած մարմնում մարդկային հոգի կարող էր բնա-
կուիլ: Գլուխը, որ աւելի կաւի կոյտի նման էր, հա-
մարեւն սարսափ էր ազդում:

—Դեհ, պարոններ, քնչ կասէք սորա մասին,—
հարցրեց կայսրը:—Միայն ֆրանսիերէն խօսեցէք դորա
մասին: Ի՞նչ էք կարծում:

—Որ սա ամենեւին ապուշ չէ, ինչպէս կարծուում
է, և որ ձերդ մեծութիւնը վստահ կարող էք հարց ու
փորձ անել:

—Ուրեմն, դուք այն մարդն էք, — սկսեց կայսրը, — որին իմ գնդաձիգները բռնել են ս. ամսի 19-ի գիշերը Դը-Մէվէր զօրապետին գաղտնի լուր տալու համար:

Ինքնակալը վերցրեց մի թուղթ և մեկնեց գերեպոյի. բայց վերջինս չշարժուեց և վեր չնայեց:

— Այնպէս է ձևանում, թէ դեռ խուլ ու համր էր է, — նկատեց սպաներից մէկը: — Սա մի խորամանկ խաբեբայ է. — աւելացրեց նա, զարկելով ապուշին:

Սա նայեց նորան և ինքն իրան ծիծաղեց:

— Այս նամակը ակնյայտնի ապացոյց է ձեր յանցաւորութեան: Գաղտնիքդ բացուած է: Վերջ տուէք այս կատակերգութեան և պատասխան տուէք:

Ապուշի աչքերն անմտաբար յածում էր իւր շուրջ: Մինչդեռ կայսեր խմբի ծեր զօրապետը անթարթ նայում էր բռնուածին: Նա արտաքուստ ալիզարդ ու պատկառելի մի մարդ էր: Այդ միջոցին նա մտեցաւ անծանօթին և ասաց.

— Ձանաչեցի ձեզ, պարոն մարկիզ:

Լրտեսը, կարծես, ոչինչ չէր հասկանում. նա անմտաբար գլուխն սկսեց այս ու այն կողմը տանել և լորձունքը թափուում էր բերանից: Նորից ծանր լուրս թիւն տիրեց, և միմիայն ժամացուցի ձայնն էր հնչում:

Դուք, — նորից սկսեց խօսել կայսրը, — իմաց էք տուել Դը-Մէվէր զօրապետին, որ բռնած ունէր Ախէնի մօտի զօրաբանակը, որ նա պահանջէ այնտեղ զարձեաց պաշտպան զօրք Նավարրի, Օվէրնի և այլ զօրագնդերից...

Ապուշը լարուած ուշադրութեամբ հետևում էր յատակին սողացող ճանճին. ոտի պինդ հարուածով նա յանկարծ ճիւղեց միջատը:

— Նոյնպէս և հեծելազօրի երկու վաշտ, որոնք

պէտք է գնալին Հալքերչտադ: Ասածներս ուղիղ են, այնպէս չէ՛, — վերջ տուեց կայսրը:

Ժամացոյցի չխչխկոցը միայն եղաւ նորա պատասխանը:

Ծեր զօրապետը դարձաւ դէպի կայսրը:

— Կերդուեմ, ձերդ մեծութիւն, որ այս մարդը՝ մարկիզ Անտուան Դը-Կօադիլօն է: Սորա երկու եղբայրները ծառայում են Մէվէրի գնդում, ինչպէս և սա ինքը: Սոքա յայտնի են ինչպէս գլխից ձեռք վերցրած անվահներ քաջասիրտ մարդիկ: Տակաւին 18-ին սա մօրուք ունէր, այժմ սափրել է, որով բոլորովին փոխուել է... Ո՛հ, ես շատ լաւ եմ ճանաչում ձեզ, — ասաց նա՝ դիմելով գերեալին: — Հապս բերանը բացէք. ազնուականների ատամները սովորաբար մաքրուած են լինում:

Դժբաղտ խելացնորը անշարժ կանգնած էր. երեւում էր, որ ոչինչ չէր լսում:

Կանչուած գնդաձիգ սպան օձիքից բռնեց ապուշին և ուժով բաց արեց նորա բերանը: Ատամներն այնպէս փտած էին ու սև, ինչպէս հիւանդի ատամները: Զօրապետին զարհուրելի բարկութիւն տիրեց:

Ապուշը թուցրեց աթոռն և մէջքից բռնած, սկսեց պտոյտ տալ, ապա վայր ձգեց յատակի վերայ: Յանկարծ նա աչքերը փակեց և սուր ճիչ արձակելով քանի մի մաղ պոկեց իրանից:

— Այս ինչ կատակերգակ է, — փնթփնթաց զօրապետը:

Երկու երիտասարդ թիկնապահների վերայ, սակայն, այս վարմունքը ցնցող տպաւորութիւն գործեց: Նոքա սաստիկ գունատուեցան և մէկը շշնջաց:

— Ակներև է, որ խելքը գլխին չէ. արդէն նայելուց էլ երևում է:

Երևում էր, որ կայսրն էլ փոքր առ փոքր հակուում էր այդ կարծիքին:

— Ես ևս չեմ կարողանում այս դժբաղդ լիմարի մէջ գէթ աննշան հետք գտնել ազնուականութեան, — ասաց նա:

— Այդպէս շտապով մի գատէք, զօրապետ: Ձրանդիական լրտեսը, ճշմարիտ է, քիչ վնաս չէ տուել մեզ. բայց այս մարդը ամենևին մեղ չունի՝ այդ բանի մէջ:

Երիտասարդ սպաները լարուած նայում էին կայսեր, շունչները պահած:

Ծեր զօրապետը պատին յենուելով կանգնած էր խորը մտածման մէջ ընկղմած: Յանկարծ նա վերցրեց իւր ատրճանակը, բոլորովին մօտեցաւ գերեպալին ետևից և արձակեց ատրճանակը, բերանը լատակին ուղղած: Ծուխ ու բոց բարձրացաւ դէպի առաստաղը, բայց ապուշը շարժման ոչ մի նշան չարեց:

Կայսրը ծիծաղեց:

— Դէհ, զօրապետ, այժմ ինչ էք մտածում: Դեռ էլի ենթադրում էք, թէ այս ջահելը խուլ չէ:

Ծեր մարտիկը մինչև անգամ գունատուեց կարեկցութիւնից: Նորից լուութիւն տիրեց, կատարեալ սպառողական վիճակ:

— Ա՛խ, էլ ինչ, — ասաց կայսրը, որին լոգնեցրել էին այդ բոլոր անպտուղ փորձերը — այս արարածը ոչ այլ ինչ է, բայց եթէ մի թափառաշրջիկ: Ո՞վ բերեց սորան այստեղ:

— Դեղին հուսարներից մէկը, ձերդ մեծութիւն, որ յայտնի է իւր սրամտութեամբ:

— Աւելի վատ: Մէկ նայեցէք այդ գլխին. նորա վերայ մտաւոր կեանքի չնչին նշան անգամ չէ նկատուում. մեռած հոգի է. աւելի ոչինչ:

Ձգուանքի արտայայտութիւնը երեսին՝ կայսրը յետ գարձաւ դէպի լուսամուտը և հէնց որ պտորաստուում

էր դուրս գնալ, ծեր զօրապետը լետ պահելով՝ հանգարտ ասաց նորան.

—Ատահասնում եմ խնդրել, ձերդ մեծութիւն, որ գեռ չգնաք: Մնացէք, Տէր, դարձեալ մի քանի րոպէ: Առաջ ես ևս կատկածում էի, բայց այժմ հաստատ համոզուած եմ, որ այս մարդը արտասովոր ճարպիկ աչքակապ է: Սա զարմանալի կերպով կատարում է իւր դերը... Ծիշտ է, պարոն մարկիզ, դուք շատ գեղեցիկ էք կատարում ձեր ձեռնածութիւնները, — դարձաւ նա բարձր ձայնով դէպի բռնուածը, անթարթ նայելով նորա աչքերին:

Ապուշը չշարժուեց անգամ:

—Այն ինչ, ասաց կայսրը, — ամեն ինչ այդ ենթադրութեան հակառակն է ավացուցանում: Այս անխելք գժբաղտ, կեղտոտ մարդը...

Զօրապետը մօտ գնաց ապուշին և օձիքը դուրս խլեց նորանից. ցնցոտիների տակից կեղտից սևացած կաշի դուրս թռաւ:

—Զերդ մեծութիւն. — ասաց ծեր զօրապետը, — ես թախանձազին խնդրում եմ ձեզ, որ երկուսով առանձին խօսենք. իսկ այս մարդը գեռ թող տեղից չշարժուի:

—Լաւ, հետեցէք ինձ, — ձայնեց նորան կայսրը:

Սենեկից դուրս գնալով՝ զօրապետը սկսեց.

—Երդուում եմ ձեզ, որ չեմ մոլորուում, արքայ:

— Իսկ ես կարծում եմ, որ դուք միայն յամառում էք, — ծիծաղելով պատասխանեց կայսրը:

—Ո՛չ, ո՛չ, ձերդ մեծութիւն, հաստատապէս ո՛չ: Խնդրում եմ ձեզ մի փոքր ևս համբերել, ձերդ մեծութիւն: Ուրիշ միջոցներ էլ կան. մէկի վերայ ես առանձնապէս յոյս ունիմ:

—Այդ ինչ միջոց է:

— Տեսնում էք, ձերդ մեծութիւն, մենք Փրանսիացու հետ դործ ունինք: Նա իրան չի մատնի. այդ բա-

նի համար նա շատ լաւ է ուսել իւր դերը: Ձերդ մեծութիւնը ծանօթ է արդէն այս հերոսական ժողովրդին, այս մարդիկ անվեհեր են, անհոգ, բայց և հետը միասին...

Այս միջոցին նոքա քաշուեցան հաշտի անկիւնը և սկսեցին խօսակցութիւնը շարունակել ցածր ձայնով: Շուտով դուրսը լուսեց հեռացող կառքի մի ձայն. ապա մի քանի րոպէից կառքը վերադարձաւ մի ում որ բերելով նստած: Կայսրն ու զօրապետը նորից լետ դարձան դահլիճը:

Ապուշը առաջուայ պէս բուժ հայեացք էր գցել իւր առաջ:

— Բացի կայսրից, որ նորից նստեց, լենուելով աթոռի մէջքին, բոլոր ներկայ գտնուողները անթարթ նայում էին ապուշին: Փոքր առ փոքր ամենքին սկսեց տիրել կայսեր կասկածը: Նորա և զօրապետի բացակայութեան ժամանակ թշուառ լիմարը աթոռը կոտրել էր, փոխառփոխ մէկ քահաճուստ էր, մէկ հանդարտ լաց լինում, մէկ բոլոր ուժով մռնչում: Բանաքամանի մէջ ցցուած փետուրը տեսնելով՝ նա կատաղեցաւ, այնպէս որ մեծ դժուարութեամբ կարելի եղաւ պահել նորան սենեկի մէջ տեղը: Այժմ նա կանգնած էր կայուած, և միայն գլուխն էր կամաց շարժում այս ու այն կողմ:

— Ձերդ մեծութիւն, — նորից սկսեց զօրապետը, — իսկոյն հնար կուենանք դատել այս լրտեսին: Վերստյունում ճանաչում են սորան, ինչպէս ազնուականի: Այստեղ մեզ մօտ մի տիկին կայ Հալբերշտատից, որ Մարիա Լէշչինեան թագուհու սենեկապետն էր. նա լաւ է ճանաչում Ֆրանսիական արքունիքի մերձաւոր ամեն մէկին: Ուղարկել եմ նորան կանչելու, և եթէ ձերդ մեծութիւնը թոյլ տայ՝ մենք նորան կներկայացնենք մարկիզին:

Կայսրը գլխով համաձայնութեան նշան տուեց: Եր-

կու պահապան դուռը բաց արին. թեթև, անձայն քայլերով հանդարտ ներս մտաւ հրաւիրեալը:

— Տիկին, ծանօթ է ձեզ այս Փրանսիացին, — հարցրեց կայսրը:

Տիկինը հարցական կերպով նայեց անծանօթին, ապա վստահութեամբ պատասխանեց.

— Ոչ, ձերդ մեծութիւն:

— Լաւ, — մէջ մտաւ զօրապետը. — ձեզ նորից կկանչենք, երբ պէտք կլինիք: Միայն, խնդրեմ, այն դռներով դուրս գնացէք:

Այս պատուէրը կատարելու համար՝ տիկինը պէտք է անցնէր նոյն իսկ ապուշի կողքի սենեկի միջով:

Նորից կատարեալ լուութիւն տիրեց սենեկում:

Գերեալի մօտից անցնելով՝ տիկինը յանկարծ սլաց, մի թեթև ձիջ արձակեց և ընկաւ ծունկի վերայ:

Նոյն վայրկենին փոխուեց ապուշի կերպարանքի արտայայտութիւնը:

— Ո՛հ, արեուհի, թո՛ղ տուէք ինձ... — և յանկարծ կանգ առաւ:

Ներկայ եղողների մէջ կատարեալ շփոթ վեր ելաւ: Կայսրը վեր թռաւ, մահանման դեղնած: Տիկինը սուս ու փուս անյայտացաւ:

— Ա՛խ, իմա՛ր, — կարեկցութեամբ փնթփնթաց մէկը:

Ներքևից բակի կողմից լսուեցաւ ծանր կօշիկների միաձայն թրխթրխկոցը, այնուհետև հրացանների նշան դնելու ձայնը: Օգի մէջ բարձրաձայն և պարզ հնչեց մարկիզ Անտուան Դը-Կօադիլօի ձայնը. «Կեցցէ՛ Փրանսիայի կայսրը»:

Լսուեց քսան հրացանների միահամուռ տրաքոցը. ուղղուած դէպի մի սիրտ...

— Այս եղանակով միշտ կարելի է բռնել նոցա, — զգնչում էր ինքն իրան քթի տակ ծեր զօրապետը:

Թարգմ. ՕՐ. ՆՈՒՍԲԴ ԱՂԱՆՍԱՆՑ